# Չիլինգարյան Մխիթար Գեվորգի

Ծնվել է 1972թ. մայիսի 16-ին՝ Երևանում: Ավարտել է թիվ 118դպրոցը: Զբաղվել է սպորտով: 1992թ. մայիսի 4-ին զորակոչվել է ժամկետային ծառայության: Ծառայել է թիվ 016 զորամասում:

**Ու երդվել ...**

Մասնակցել է Տավուշի մարզի ինքնապաշտպանությանը: Արծվաշեն գյուղի պաշտպանության ժամանակ. 1992թ. օգոստոսի 8-ին երդվյալ զինվորը զոհվում է:

1996թ. 20 սեպտեմբերի հրամանագիր
Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից
Առաջին Աստիճանի Մարտական Խաչ
շքանշանով է պարգևատրվում
Մխիթար Գևորգի Չիլինգարյանը:

**Նադյա Չիլինգարյան** /մայրը/ -

- Մխիթարը փոքր հասակում սիրում էր խորանարդիկներով տնակ պատրաստել: Չէր սիրում քանդելն ու թափելը, նրա էության մեջ կար միայն սարքելու և կառուցելու ձգտումը: Բայց ինչպես մյուս երեխաները, նա էլ էր սիրում «կռիվ-կռիվ» խաղալ, հաճախ գնում էր հրածգարան՝ կրակելու: Սիրում էր ճանապարհորդել, ճանաչել աշխարհը: Սիրում էր աշխարհը...
- Սիրահարվե՛լ է, անշո՛ւշտ: Գուցե և արդեն սիրե՞լ...



- Հանգիստ էր և ինքնամփոփ, չէր արտահայտվում: Բայց սիրում էր մի աղջնակի՝ դպրոցական հասակում: Անունն Աննա էր: Այնքան ինքնուրույն էր, որ ոչ մեկից ոչինչ չէր հարցնում: Սակայն մարդամոտ էր և մարդասեր: Սիրված էր շրջապատի կողմից:
- Նա ապրու՞մ էր իր ժողովրդի հոգսերով:
- Իհարկե՛: 1988թ. երկրաշարժի ժամանակ նա աշխատել է «Սպիտակ» փրկարարական ջոկատում:
- Ի՞նչ երազանքներ ուներ Մխիթարը:
- Նա ավարտել էր թիվ 18 ուսումնարանը, ուներ կարող-մոտորավարի մասնագիտություն, որով և ուզում էր ավելի խորանալ: Չէր սպասում, որ պատերազմ կլինի, նա հոգով խաղաղ էր ու խաղաղության մարտիկ:
- Դուք սպասո՞ւմ եք, որ կարող է կրկին պատերազմ լինել:
- Մենք՝ մայրերս, չե՛նք ուզում, որ այլևս պատերազմ լինի, որ էլ ո՛չ մի մայր նման վիշտ չտեսնի, որ չորբանա՛ն մեր երեխաները և նրանց աչքերը միշտ ժպտան: Բայց եթե պետք լինի, որ պաշտպանենք մեր հայրենիքը, ապա մյուս տղայիս էլ հաղթանակ կմաղթեմ:
- Ի՞նչ կմաղթեք մեր ազատամարտիկներին:
- Ես նրանց առաջին հերթին ցանկանում եմ՝ առողջություն և ընտանեկան անդորր: Թող նրանք երբե՛ք ընկճված չլինեն և միշտ հիշեն, որ ժողովուրդն իրենց սիրում և հարգում է:
- Ի՞նչ կմաղթեք «Ազատամարտիկ» -ին:
- Թող կազմակերպության հիմքերն ամրանան: Բարին միշտ նրան առաջնորդի, թող մեր խոսքը հնչի ծեր բերանով, լինեք մե՛րը և մի՛շտ ժողովրդի կողքին:

## ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ

Արցախ Աշխարհում կենաց ու մահու պայքար էր: Նոր էին նստել մարտական գործողություններից հոգնած տղաները.

- Մի բուռում բան ուտենք, կհասցնե՞նք...
- Տղե՛րք, մի շիշ գինի էլ ունենք:
- Պա՜հ-պա՜հ, համ էլ կտաքանանք:

Հնչեց մարտական տագնապի ազդանշանը, բոլորը շարժվեցին դեպի հրացաններն ու սկսվեց թեժ մարտը: Մի քանի ժամից պայքարը քիչ-քիչ հանդարտվեց և տղաները կրկին սեղանի կողքին էին.

- Մի քիչ հաց ուտենք...

Գինու շիշը դատարկ դրված էր սեղանին: Նայեցին իրար - բոլորը մարտին մասնակցել էին.

- Տղե՛րք, գինին ո՞վ խմեց...

Բուժքույր Աննան, դաժան օրվա ցավերից հոգնած, քնելու տեղ էր փնտրում: Ոչ գիշեր էր: Տղաներն էլ էին հոգնած և նրա համար տեղ չէին թողել: Արդեն քնել էին:
Աննան դրսում պտտվե՜ց – պտտվե՜ց և կարծես մի փոսում փափուկ տեղ գտավ: Շոշափեց, ժպտաց և անմիջապես պառկեց քնելու:
Առավոտյան բացեց աչքերը: Մի ձեռք կախված էր դեմքի վրա: Հետ շպրտեց: Ձեռքն իներցիայով հետ եկավ և հարվածեց դեմքին: Շատ սառն էր: Մի քանի նման անհաջող կատակից հետո Աննան զայրացած ոտքի կանգնեց... և բղավոցով դուրս թռավ փոսից.

- Տղե՛րք, թուրքերի մեռելները...

Տղաները վաղուց արդեն դիտում էին Աննային, երբ դեռ քնած էր... նրանց գրկում: